

մեր օտարամոլ թիֆլիսի, քւաղի-հալի, թէ մարդկանց և թէ կանանց հասարակութեան աշքից չէ վրիպել ալդ երեղթը, բարձր-Հազը, մասնաւորապէս կարինը, պէտք է որ ներկայացնի հակառակ պատկերը, Գոնէ Կթէ Ախալցիլսան Կովկասեան կարինն է, կարինի կնոջ տիպարը, իւր գեղեցկութիւնով, պէտք է գերազանցէ տղամարդու տիպարից, Վանի հալերի մէջ, իմ, զեռ ևս ոչ վակատար ծանօթութեան համեմատ, պէտք է որ տղամարդու տիպարը շատ աւելի ստոր վճի Մուշի հալերի տիպարից, Պօլսցի հաէ տղամարդը չնչին է, հաէ կինը՝ նշանաւոր է թէ կաղմածքով և թէ տիպարալ:

Տիպարների որոշելը և նոցա մանրազննին հետազօտութիւնը շատ տեսակէտներից կարեւոր է և հետաքրքրական Հաղկական նորագուն և հընագուն գրականութիւնը ալդ նիւթի մասին գրեթէ ոչինչ չի տալիս, Բայց անիրաւացի կերպով: Տիպարները իրարից որոշում են, որպէս ընաւորութիւնները որոշում են: Որ և է հետազօտութիւն «հալի» մասին կը լինի շատ թերի, առանց հակական ցեղի տիպարների համեմատական հետազօտութեան և նոցա գնահատութեան: Ճիշդ է, որ գնահատութիւնը ամեն մարդու գործ չէ: Այսաեղ հարկաւոր է մի մարդ, որը ճաշակի հետ միացնել կարողանակ բոլորը, ինչ կաէ եւրոպական գրականութեան մէջ ալդ նիւթի մասին՝ օտար, ինչ թէ նոր ազգերի վերաբերեալ, Ահա՞ մի նիւթ, անսպառելի նիւթ մեղ խոստացւած պատկերազարդ թերթերի համար, եթէ միան նոքա ձեռնհասութիւն ունենան դոնէ մի աղոպիսի ծառապութիւն անելու հակական գրականութեան:

ՀՈՒՍԻՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԻԶՄԻՐԵԱՆՅ ԿՑԱԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄՆԱՅՈՒՆ ԹԱՆՉԱԺՈՒ-
ՂՈՎՈՅ Ի ՀԱՆԴԻՍԻ ՍԱՀԱԿ-ՄԵԽՐՈՊԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ

ի 29 լունիսի 1889.

Այս երրորդ տարեշրջանն է այն գրական հանդիսին, որ տեղի կ'ունենակ ասս ի մակրաքաղաքիս, ըստ բարենպաստ կտակի բարեվիշտուակ Յովսէփակ Խղմլրեանց Ղղլարեցւու, որ ինչպէս իւր կենդանութեան ատենքաջալեր հանդիսացաւ Ազգավին Պատմութեան և Դպրութեան համար աշխատող գրիչներու, նոյնպէս և լեռ մանւան կտակաւ աւանդած է շարունակել ալդ քաջալերական նպաստը առ արժանաւորս, ի ձեռն Ազգավին Պատրիարքարանի կարգեալ Յանձնաժողովու, լատուկ հանդիսիւ, և լաւուր հանդիսաւոր տօնի Սրբոց երանելի թարգմանչաց Մեծին Սահակակ և Մեսրոպակ բաղմերախտ Հարցն մերոց, որոց անմուանալի և վեհ լիշտակը կը տօնէ ակսօր մեր Հալերի Առաքելական Եկեղեցին:

Խզմիրեան կտակի Գործադիր Յանձնաժողովուս Ատենապետ Վահեմ. Գարբիել էֆէնտի Նորատունկեան դէպ լնւրոպա ճանապարհորդելուն համար, աւսօր բացակատ կը դանւի սոյն Հանդիսէն. բայց իւր կարծիքներն գրաւոր թէ բերանացի հաղորդած լինելով Յանձնաժողովուս, իրրե իւր մասնակցութեամբ կը ներկապացնեմք պատւամեծար հանդիսականացդ աւս տարի առ. մեղ հասեալ գրաւոր աշխատութեանց ցանկը, և նոցա վերաբերեալ տեղեկագիրներն ու Յանձնաժողովուս որոշումներն.

1. Նօտոք Հայոց, գործ ժրաշան Ղեռնդ վարդապետի Փիրզալէմեան, տպագրեալ ի կ. Պոլիս 1888:

2. Քննուն Պատրութեան Արշակ Բ.-է և Պատոյ, գործ արգու դասատու Եղիազար էֆէնտիի Մուրատեան, ձեռագիր:

3. Հին Հայոց Տողածական որւեսոց, գործ Պ. Աւետիս Բահազրեանց բանասիրին, ի Շուշի, ձեռագիր:

4. Նեւեւ Ազգային Պատրութեան համար, գործ ծերունի պատմագէտ Պ. Գալուստ Շիրմազանեանի, ի Թիֆլիս, ձեռագիր:

5. Ընդուղութեան Հայիստուութեան, գործ Պ. Խ. Բ. Վահունուլի Հայոց կարմրածոր գիւղէն, ձեռագիր:

Գործադիր Յանձնաժողովս ասս աշխատութիւններէն առաջինը, Նօտոք Հայոց, իրրե ոչ ամբողջացեալ գործ, և վերջինը՝ Ընդուղութեան Հայիստուութեան ժամանակէն շատ ուշ առ. մեղ հասանելուն, վերապահեց լառաջիկատ 1890 տարուու քննութեան:

Իսկ Քննուն Պատրութեան Արշակ Բ.-է և Պատոյ, գործը՝ որ 119 մեծագիր երեսներէ կը բաղկանալ, յանձնեց նախ Մարկոս էֆէնտի Աղարքէպեանի, որ 14 մեծագիր երեսներէ բաղկացեալ քննական տեսութիւն մի արած է, որու եղրակացութիւնը միան կը կարդամք, որ ահաւասիկ.

...Այդ ամենը մեծ ուշադրութեամբ կարգացի, իմ հակեացքէն տարբեր եղած էցտերն ամենէ առաջ ցուց տվի. Իսկ ամբողջութեանը մէջ, հեղինակը ցուց է տալիս, ճշմարիտն ասելով, բաւական բարձր աստիճանի խորատեսութիւն պատմական ուսման մէջ և բաւական լաջող գրիչ պատմական ուսման վարդապետ լինելու. սական հակառակ իր լառաջաբանում տած սահմանին, որ ասում էր թէ Աքննութիւնը կուգաէ վաղ կամ անագան՝ և Նեմեսիսի կշիռն ի ձեռին կուտակ իւրաքանչւրին ըստ արժանեաց», ինք լարդու հեղինակը՝ ալդ քննական պատմութեան մէջ մի փոքր շտապով է արժանեաց տեղ վճիռներ արձակում, որ նոր պատմական բանաքննութիւնը չը տաներ. Բայց և ախազէն հեղինակին այդ ձեռնարկութիւն պատիւ է բերում իրան և ան ազգին, որուն պատկանում է պատմութիւնը, և ինձ համար, ճշմարիտն եմ ասում, մեծ հրձւանք է տեսնել մեր գրական մարդկանց զասը, որ իրանց ազգին և աշխարհի պատմական գրականական և եկեղեցական ուսմանց և զիտութեանց հետն են պարապում և աղջակիսի օգտակար և լուսատու գրական գործեր ընծալում ազգին,

ինչպէս որ Արշակ Բ.-ի և անոր Պապ որդւոյն քննական պատմութեան հեղինակն էր արած, որ ամեն կերպով քաջալերութեան և վարձատրութեան արժանի է, Յարգու հնդինակը՝ քանի դործ միանգամալն է կատարած. դա իր ալդ ձեռնարկութեամբ, նախ՝ հայոց պատմութեան ուսումնակրութեանը արծարծւելուն զրդիւ է լինում և կը լինի մեր աղքանոց մէջ. երկրորդ՝ արդեան զրականութեան պատմական մասին մեծ ժառանգութիւն է մատուցանում և կը մատուցանէ՝ մեր նախնեաց հիանալի պատմութեան գրականութիւնը կրկտելով: Երրորդ, և որնոր բարգու հեղինակին նպատակն է և որնոր զիմաւոր բանն է, երկու պարթե թագաւորներ, Արշակ Բ. և Պապ, որոնք ինձ կերեակ որ կուսակցութեան հոգւով մոլած մի քանի պատմազրերու զրոցներով սև սև ամպերումն են ծածկւած Սանդարամնտի գեերու նման, նա ալդ երկու թագաւորները դուրս հանելու ջանք է արած ալդ ամպերու մէջն լուս աշխարհ և մեզ ցողց է տւած դրանք, իբրև օրինաւոր և չնորդքով թագաւորներ, որոնցմէ առաջինն հայոսապան է կարծւում և երկրորդը՝ սրբասպան:

Ալդ, Տեմրդ պատւականք, և ես կ'աւելացնեմ որ ակա առիթով, ինչպէս որ մի մարդ, երբ իր անձը չէ ճանաչում, ոչ կարող է գիտենալ իր արժանաւորութիւն և ոչ էլ կարող է ուրիշին ճանաչեցունել, նմանօրինակ և մի ազգ՝ երբ իր ազգը ճանաչում չէ, ոչ կարող է սիրել, գիտենալ իր ազգ և ոչ էլ կարող է լինում լարգել տալ օտար ազգաց: Ես կարծում եմ, որ ակսօր մեք Հակըս, որ և է դասակարգի որ պատկանում ենք, ոչ մեր նախնիքը ճանաչում ենք պատմականօրէն և քրիստոնէօրէն և ոչ էլ ան հանդամանք որու մէջ գտնուում ենք ակսօր աշխարհիս վրաց: Ահա ալդ է, ըստ ինձ, այն ամենամեծ թերութիւն, որ մենք ամենքս միանգամալն ունինք ակսօր և ալդ թերութեան ցաւերը կը քաշենք իբրև ազգ: Սական ազդ ազգօրէն ինքնաճանաչութեան ես չեմ կարծում որ առանց նւրոպացոյ մէջ ծաղկած գրականական, բարուական երնական գիտութեանց՝ ծանօթութեան ձեռնուութեան կարող լինինք հասնել, վասն զի մեր պատմութիւն, մեր գրականութիւն, մեր լեզու և եկեղեցի քաջ ճանաչելու և գնահատելու համար Նւրոպականները պէտք է գիտենալ. իսկ մեր աշխարհը՝ նորէն Նւրոպացոց մշակած բնական գիտութիւնքը:

Մեամ ձեղ, Տեմրդ պատւականք,

Ամենալն մեծարանօք

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԳԵԱՆ»

Քանտիվի 1889 ապրիլ 30.

Ապա լանձնւեցաւ Գեր. Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեանի, որոց քննադատութիւնն ահաւասիկ է.

Ի Բներա Կ. Պոլսու. 2. Յունիսի 1889

ԱԼՍԵմափալ Ցէր

Աւանձնապետ Գործադիր մնակուն Յանձնաժողավոր Յ. Խզմիրեանց կտակին,
ի Կ. Պոլիս.

«Մալիս 10 և համար 72 թւագրեալ նամակաւ լանձներ էիք ինձ
քննութիւն մը կատարել աբնական պատմութիւն Արշակ Նրկորդի և ա-
նոր Պապ որդւոնց անուամբ զործովն վրաք, և իմ կարծիքը բացատրու-
թեամբ լավագրել Պատուարժան Յանձնաժողովովդ,

ԱԼԵՐՈՒԺԵԱԼ դործն, ինչպէս որ ինձ լանձնւեցաւ, մակագրի երես և
հեղինակի անուն չը կրեր, և զարդ՝ անկողմնակալ գատաստանի նպաստե-
լու համար Յանձնաժողովովդ կողմանէ ձեռք առնած միջոցներուն հետե-
ւաճք կը կարծեմ:

«Դործը ձեռագիր է և մէկ լառաջաբանէ, մէկ ներածութենէ, և եր-
կու զլուկիներէ բաղկացնալ լինելով 119 հասարակ երևներու մէջ պա-
րունակւած է, որ ըսել է թէ մնձ և բաղմաշնաս դործ մը չէ, և ալդ
կարծիքն առաւել ևս կը հաստատի, եթէ դիտեմք թէ ազդ 119 երեսնե-
րուն կէսը նւիրած է Բիւղանդակ և Խորենացոյ և մաս մըն ալ Ամմիա-
նոսի պատմութեանց բնագիրներուն ընջօրինակութեան, որով զրեթէ 80
երևններու կը վերածւի հեղինակին խսկական աշխատութիւնն և դործը
փոքրիկ երկասիրութեան մը պամաններու կը վերածւի.

«Հեղինակն իւր աշխատութեան նպատակը բացատրելով կ'ըսէ թէ
ուղած է զրել «Արշակ Բ.-ի և անոր Պապ որդւոն ճշդիտ պատմութիւնն,
անոր շուրջ պատած առասպելախալան զրոյցներն և չարախօսութիւններն
և վատահամբաւէջ կարկատուն վէպերը դուրս թօթափելով, և ալսպէս ի
վեր հանելով հաղաք հինդ հարիւր տարւան անարգեալ վիշտատիէ մը եր-
կու մնձ անձներ, որոց վրաք ազգն ստուգիւ պարծելու տեղի ունիւ, Խեդ
խօսքերն աւելի ճշշդ կը համապատասխանն հեղինակին նպատակին քան
թէ «քննական պատմութիւն» լորջորջումը, (զոր ի պակասութեան մակա-
դրին Ձեր պաշտօնագրէն կը քաղեմ), որովհետեւ պատմութեան բոլոր հնա-
շագույն մասերն ի նկատի առնած չեն, այլ պարզապէս հոգութեանէն ո-
ճով խօսւած է Արշակն ու Պապն արդարացներու համար այն ամբաստա-
նութիւններէն, զոր աղքալին պատմութեան աղքիւրք՝ Բիւղանդն ու Խորե-
նացին, խօսած են այդ երկու անձանց վրաք:

«Քննադատական պատմութեան մնձ կէտը ժամանակադրական խնդիրն է.
և մեր պատմութեան՝ մնձագոյն դժւարութիւնք ժամանակագրական անհամա-
ձակնութիւններէ են ծագած, և Արշակակ ու Պապակ ժամանակիներն ալ սո-
վորականէն աւելի կնճռաւլց են, Արդ, ըստ իս, Արշակակ ու Պապակ քննա-
կան պատմութիւնն զատկապէս դրել ուղղող՝ նախ և առաջ պարտաւոր էր
ալդ երկուց թագաւորաց թւականները ճշդել: Հեղինակը չհաւանիր Խո-
րենացւոյն ժամանակադրութեանը, ընդունիր Բիւղանդակ ժամանակաց հա-
շիւն, և չբացատրեր թէ ի՞նչ նկատմամբ հաստատած է իւր թւականներն,

որ վերջին ժամանակաց պատմութիւն գրողներուն շատերէն ալ տարբեր են, քննական պատմութեան կամ պատմական քննադատութեան այդ կէտք պէտք չէր որ անտես առնեէր Արշակաց և Պապաւ վրաւ լատուկ և քննական երկասիրութեան մը մէջ, այսինքն է բաղդատել զանազան ժամանակադրական հաշիւներն, և ցուց տալով հակառակութիւններն և քաղելով հաւանական կէտերը՝ հաստատել հիմնական թւականներ, և ոչթէ գոհանալ փակագծի մէջ նշանակեալ թւականներով, ինչպէս կ'ընեն համառօտ պատմութիւններ գրողներ։

«Քննական պատմութեան պահանջն էր ևս, որ, ինչպէս ժամանակադրական թւականները, նոյնպէս և դիպածոց շարքն ու կարգը եթէ ոչ ստողը, գոնէ հաւանակագոյն դրութեան վերածէին, բաղդատելով և կշռադատելով թէ հին աղքիւններու տարբերութիւններն և թէ նոր գրողներու տեսութիւնները։ Հեղինակն այդ մասին ալ լատուկ աշխատանք նւիրած չէ. օրինակի համար՝ կարծիք լաբնած չէ թէ ի՞նչպէս պէտք է համաձայնեցնել Արշակաց Յունաց հետ տևական բարեկամութիւնն՝ և ի Յունաստան արշաւանքներն, և կամ թէ ի՞նչ պէտք է ըսել Պապաւ Ցարսոն երթալուն վրաւ՝ զոր կը փշէ Ամմիանոս միավն, և ապն։

«Բաց հեղինակին բուն նպատակն, ինչպէս վիշեցի, և գործոն էութիւնն հաստատւած են փաստաբանական նպատակին մէջ և իւր դիտումն է ցուցնել Արշակ Երկրորդի համար, 1. թէ վարքը դատապարտելի չէ. 2. թէ Արշակաւանի շնորհիւնը գովելի զործ է. 3. թէ Գնէլի սպանութիւնն չանցանք չէ. 4. թէ նախարարաց կոտորածն արդար է. 5. թէ իւր հայրն Տիրանը սպանած չէ. Իսկ Պապաւ համար կ'ուզէ հաստատել, 1. թէ վարքը դատապարտելի չէ. 2. թէ Ներսէս Մեծ Կաթողիկոսը թունաւորւած չէ. Ազդ ամբաստանութիւնները ցրելու համար հեղինակն իրեն դէմ ունի երկու պատմիչներն ալ, Խորենացին ու Բիւզանդն հաւասարապէս, ուստի տրամարանական և հոգեբանական խորհրդածութիւններու կը դիմէ, որպէս զի եղրակացնէ պատմւածներու անհաւատալիութիւնն, և թէպէտ երթանն կարի կ'առատանակ ենթաղրութեանց մէջ՝ Արշակն ու Պապն հանճարեղ ու քաջ ենթաղրելով, և հանճարեղութեան և քաջութեան անդարմար պարագները մերժելով, սական, ընդհանուր առմամբ, անընդունելի չեն հեղինակին նկատողութիւններն և եղրակացութիւններն, որք բոլորովին նոր ալ չեն ազգավին պատմութիւնը մշակողներուն համար։

«Նոյնը կ'ըսեմք հեղինակին ան տեսութեան վրաւ, որով Բիւզանդացի Փաւատոս եպիսկոպոսին և Խորենացի Մովսէս եպիսկոպոսին եկեղեցական դիրքերը ի նկատ առնելով, և եկեղեցական՝ պաշտօնէից և կրօնական զգացմանց ժամանակին ունեցած ազդեցութիւնը վիշեցնելով, կ'ուզէ մեկնել Արշակաց և Պապաւ մեղադրիլը, քանի որ եկեղեցական ազդեցութենէ անկախ ձեւ մը կ'ուզէին տալ իրենց թագաւորութեան, և Տրդատէ և Խոսրով երկրորդէ եկեղեցեաց և եկեղեցականաց տրւած ընդարձակ կալ-

ւածական վակելմունքները և արտօնութիւնները սեղմալ կը ջանավին։ «Հեղինակը բորբռեալ ցասման կը հասնի երբեմն, երբ Արշակի և Պապի տրւած անարգական բացատրութիւններուն դիմաց կը տեսնէ օտար կայրներու և զօրապետներու տրւած գովեստի բացատրութիւնները, և կը կարծէ իրաւոնք ունենալ կասկածելու նոյն խակ Խորենացւոն հալքենասիրութեան վրաց Խորենացւոն ամենէ անողոք քննադատներն իսկ այդ եղակացութեան չեին հասած երբէք»։

«Հեղինակը ջերմ պաշտպան է նոր դարուս աշխարհականացեալ պետական գրութեան, և եկեղեցւու և պետութեան հիմնական բաժանման քարոզիչ, սիրող եկեղեցական ստացմանց ջնջելուն, ամուսնալուծութեան ընդունմալուն և ավել և վերջին դարուս մէջ եւրոպական աղքերէ ումանց մէջ հաստատւած աղդ տեսակ օրէնքները, արդէն Արշակաւ և Պապաւ կողմանէ գործադրւած կը գոնէ, և իննատաներորդ դարու քաղաքավին իմաստութեան սկզբանքները՝ արդէն իրազործեալ կը գտնէ չորրորդ դարու՝ թագաւորներու մտաց մէջ։ Նկեղեցական պատմիչներուն՝ Արշակին և Պապին վերագրած գործոց և վարուց աղականութիւնը, հեղինակին տեսութեանց մէջ քաղաքավին իմաստութեան գործեր կը դառնան»։

«Գրութեան ոճը եռանդուու է և հաճութեամբ ընթեռնլի, ալ խառն երգիծական և բացականչական ասութիւններով, որք լուրջ և քննադատական գրութեանց պահանջումներէն դուրս են»։

«Ալդ համառօտ տեսութիւնները պարզելէ իստու «Քննական պատմութիւն Արշակ երկրորդի և անոր Պապ որդուն» անուամբ ձեռագիր գործին նկատմամբ իրաւունք կը սեպեմ կարծելու թէ»։

«Ա. Կարենորութեան տեսակէտով մեծ և նշանաւոր երկասիրութիւն մը չէ. և թէ».

«Բ. Քննադատական տեսակէտով բոլորովին լրացեալ գործ մը չէ».

«Սական միւս կողմանէ հարկ է լավտարաբել թէ».

«1. Աղդավին պատմութեան մէջ քննադատական հոգին արծարծելու օգտակար է».

«2. Աղդավին պատմութեան հետաքրքրական մի կէտը լաջողութեամբ լուսաբանած է».

«3. Իւր մասնաւորեալ և սահմանափակ նպատակին հասած է».

«4. Գրագիտական տեսակէտով հաճութեամբ ընթեռնլի գրութիւն մի է».

«Նպաստաւոր և նւազ նպաստաւոր կողմերը քննելով մրցանակի արժանաւորութեան վրաւ վճիռ հասանելը ինձի համար դժւար է, քանի որ ուրիշ աշխատութեանց հետ բաղդատմամբ միան աղդ որոշումը հնար է տալ, իսկ ինձ անծանօթ են մրցակից աշխատութիւնները, որոց նկատմամբ մաղթելի էր ինձ որ քննիչք նոյնչափ խատութեամբ կարծիք լավտ-

Նէին, որչափ ևս հարկ դատեցի կատարել, զի, բաղդատութեանց պահուն, քննիչներու խստավահանջութիւնն ալ բաղդատելի կէտերէն մին է.

ՄՆԱՄ ՀԱՐԴԱՆՅԱՔ

ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿ. ՕՐՄԱՆԵԱՆ

Հին Հայոց Ցողուական Արեւելու գործը որ 97 երեսներէ կը բաղկանաւ, լաճճւեցաւ նախ՝ գրադէտ Թովմաս էֆէնտի Թէրզեանի, և ապա ամեն. Խրիմեան Ս. Հալրիկի, ինչպէս և հեղինակն կը բաղձակ.

Ահաւասիկ Թէրզեան էֆէնտիի քննական գրութիւնը.

ԲԱՆԿԱԼԹԻ, 12 Ապրիլ 1889.

ԱՎԱԽՄԱԳԻԱԱ Ա. ՏԵԽՆԱՎԵԿ ԷՓԷՆՏԻ.

«Համեր էիք Զեր մարտ 30 թւականաւ նամակաւը լղել ինձ լընթեր ցումն ։ Հին Հայոց տաղաչափական արւետը» անուամբ ձեռագիր մը՝ որու վրաէ՝ առ սղութեան ժամանակի՝ կը փութամ համառօտիւ հաղորդել Զեղ կարծիքս՝ լառաջիկակին թողլով՝ եթէ հարզը պահանջէ՝ ընդարձակադունս գրել. Ալժիմ իսկ քանի մը մասնաւոր կէտերու վրակ առանձին գրութիւն մ'ունիմ պատրաստ:

«Ըստ իս, ալս երկասիրութիւնս երկու նկատմամբ Զեր խրախուսանաց կ'արժանանաւ.

«Ա. Զի նիւթ առած է աղգալին վաղեմի տաղաչափութեան տարտամ և մութ մնացած մէկ կէտը լուսաբանել.

«Բ. Զի ընտիր օրինակ մը կ'ընծալէ քանասիրական խուզարկութեանց, և կը պարունակէ միանդամակն սուր դիտողութիւններ և ոչ սակաւ հըմտութիւն.

«Սական զանաղան քննադատութեանց ալ տեղի կուտակ.

«Ա. Զեմ ըսեր թէ լեզուն անըմբոնելի է, ալ չեմ տեսներ բացարութեանց եղանակին և նիւթոց տրոհման մէջ ալն չստակութիւնը, զոր կուտաէ կառարելապէս աղէկ լուսակալ և ըմբոնեալ գաղափար մը և որով կարելի կ'ըլլակ որոշ և բացալապ կերպով համագիւտ ըլլան հեղինակին մտաց իւր ամեն պարագաներով, թող որ ուստազնեստ ծպտեալ քանի մի եւրոպական բառեր կան, ինչպէս ցեղուք, ովլօքէնելի, հեղէնէնի և ալն, որոց կամ բնիկ լատին բառը պէտք էր կամ պարզապէս հակերէնը՝ հադարձ, շանկային, չափուան և ալն:

«Բ. —Պաշտպանած դասն ալ ինձ քննադատութեան ենթակաէ կը թվութեմ տեսներ որոշ ալն օրէնքը որոյ վրաք հիմնած է հեղինակն իւր ենթադրութիւնը. Զեմ հասկնար անպիսի տաղաչափութիւն մը, որոյ ոչ վանկերն որոշեալ են ոչ անդամք, և այս մասին խոնարհաբար կը խոստովանիմ, որ սրժանի եմ խառնիլ ի թիւ իւր կշտամբած տղիտաց. «Ալղպէս կը կարևոքա ամենեքեան որոնք չը գիտեն արձակ և չափածող տողերն իրա-

րից զանաղանելու», Մէն մի տողին համար ուրովն առանձին չափ մը հնարել՝ և ըստ քմաց զան հատւածնել՝ միով բանիւ պնդել թէ առանց սահմանեալ չափերու կարելի է տաղաչափել, կը տարբերի արդեօք ըսել է թէ առանց ամանակի երաժշտութիւն կ'ըլլայ Ենթաղրելով հանդերձ թէ ազդ հատուկտորք կ'երգէին՝ բաւական փաստ չէ կարծեցնելու համար թէ ստանաւոր են՝ դոնէ ընդհանուր մատենագրութեան ըմբոնած ձևոն համեմատ Տաղաչափութիւն բառն լինքնին ազդպահի կարծիք մը կը հերքէ՛ ։ Դատ օրինակք կան թէ առ մեղ թէ առ օտարս երգած արձակներու ։ Ըստ իս Քաղրասաւուուն հակական չափը վերջին սահմանն է զոր քերթողական թովառութիւնը կրնաւ ներմբւ Պ. Բահադրեան կը քննաղատէ մնձ հակաբանին ալս դիւտը, որովհետեւ, կ'ըսէ, սուղ և երկոր վանկոց Ենթաղրական մէկ կշռին վրակ հիմնաւած է Յիրաւի մեք ակժմ սուղ և երկար վանկերն ճշդիւ չափելու միջոցները չ'սնձինք, և սական որչափ բան հնար է սովորիլ ալս մասին բալից և մաննաւանդ հողովոց փոփոխութեան ուշադիր ուսումնասիրութեամբ Ալլ Պ. Բահադրեան սուղ և երկար վանկերն իբր քմահաճող մտացածին պարսաւելով հանդերձ՝ իւր չափերն մեղ ընդունել տալու համար սուղ և երկոր անդամներ հնարելու պարտականութեան մէջ կը զդաւ ինքզինք ։ Եւ ասոր ինչ փաստ կ'ընծալէ ։

«Ոչ ոք տարակուսած է թէ նախնիք տեսակ մը ներդաշնակութիւն կը փնտուէին իրենց գրութեան մէջ և ալս ներդաշնակութիւն կրից բացատրութեան կը համապատասխանէ ։ Ասոր բազմաթիւ օրինակներ կան ։ զորօր Ցորաւ ձիուն նկարագիրը ։

«Միթէ դու ագուցեր ձիու զօրութիւն...» Ողբ Դաւթի ։

«Աքիսողոմ որդեսակ իմ, որդեսակ իմ Աքիսողոմ» և ալլն Եղիշէ, նկարագիր Հակ բամբշաց ։ «Ժիկնամք փափկասունք Հալոց աշխարհին» ։ և նոյն իսկ Խորենացւոյն Հակակ նկարագրին մէջ շատ անցքելու Բալոց արձակ գրութեան մը ներդաշնակութենէն չափշտակւելով մասնաւոր չափ մը կամ անսակթաք կանոն մը խնդրել անդ՝ ինչպէս կը պահանջէ տաղաչափութեան արեսայը՝ կարծեն իրականութեան սահմանէն անդը կը տանիւ Պտանաւոր մը կը չափւի կամ երկար և սուղ վանկերով՝ ինչպէս Հելլենականը կամ չետերով՝ ինչպէս Խտալականը կամ բառից վանկերուն թւով՝ ինչպէս արդի Հայն Ֆրանսացին ։ Ուստի Պ. Բահադրեանի հաւանելու համար հարկ է որ կամ մեր նախնեաց մէջն ընտրած օրինակներուն ալս վերոգրեալ չափուց միովն լարմարիլ ցուցնէ կամ պարզէ ան օրէնքը զոր կը կարծէ թէ ընտրած են մեր նախնիք Ակս կէտը լուսաբանել իրեն ճշմարիտ պարծանք մը կըլլար ։ թէ նարեկացւոյն և թէ Սաղմոսաց մէջ տարակուս չը կաւ որ անպիսի տողեր կան օր տաղաչափութեան ծանօթ սկզբանց կը չարմարին բաց անկէց հետեցնելու համար թէ ամբողջ գործն տաղաչափեալ է ապացուցի կարօտ ինդիր մ'է ։

Այն պարագափ մէջ առաջարկը աւելի հետաղօտութեան և ուսում-

Նասիրութեան կարօտ կը թւի ինձ՝ վերջնական որոշման մը լանգելու համար,

Մնամ խորին բարդանօք Թ. ԹէրջեսԱն»

Ահաւասիկ և Խրիմեան, Սրբազնի նամակը.

ԱՄԵՅ. Տեարք և Անդամք Յանձնաժողովով Խղմիրեան կտակին.

ԱԱրարատեան աշխարհի բանասիրաց կաճառէն բնիկ Շուշեցի Պ. Ամետիս Բահապետեան Հայոց հին տաղաչափութեան արւեստը ուսումնասիրած ըլլալով, ցանկացեր է որ իւր աւր աշխատութիւնը արժանի համարէի ընդունէլ ի կարգ Մրցանաց Խղմիրեանց կտակին:

«Պատուարժան բանձնաժողովով սոլն աշխատութեան օրինակը լանձնարարւած է ինձ, որ կարդամ և գնահատեմ զան, Արդէն լառաջ քան երեսուն տարի գնահատելով անհամաշափ մեր նախնեաց տաղաչափութեան արմեսոր, չօրինած եմ երկու Հրաւիրակներ Արարատեան և երկրին Ամետեաց: Եւ լառաջ քան զմեզ ուսումնասիրելով հանդերձ գնահատած է Հայր Արսէն Բաղրատունի՝ Մշակականի թարգմանութեան լառաջաբանի մէջ, և իւր իմաստուն ընտրութեամբ՝ գերազանց ևս համարած է նախնեաց տաղաչափութեան անհամաշափ ձեն քան համաշափ անդամոց և առջից նունալանգ համաշափութիւն: Ուստի Հայր Արսէն, վաշտարտն ևս կանխելով, իւր Մրցանակն ընդունէր է հաւ բանասիրաց կաճառէն: Սորա համար ես երգեցի լախտամ:

«Զօր ծծեալ Հակաստանեաց շուր զգացի զոգի նախնեաց

«Վաճառեալ զՀոմերոս զակն ստացաւ զՎիրգիլեանն

«Զի տեսի ի նմա ճշգրիտ զոգի նախնի երգահանաց»

ԱՍկակն Պ. Բահապետեան ևս իւր մրցանակն ունի. զի իւր հետազօտութիւնք աւելի խոր և խնամով են, աւելի ընդարձակ, աւելի բնական ու պալծառ. թէ գրական և թէ ժողովրդական լեզուով հարուստ և բազմադիմի օրինակներ լառաջ բերելով կը հաստատէ թէ մեր երգահան նախնեաց ընտրելագոյն ձեն անհամաշափ երգեր, տաղեր ու շարականներն են: Եւ հվ է ալդ ձեռոն հոգւող բնական վարժապետ: Ես կասեմ Դրախտի երկիրն է, որ կը ներշնչէր ու կը վառէր՝ բանաստեղծի ոգին, և ոգին կը չօրինէր հազարումէկ ելեէջներ: Գիտես թէ հայոց գաւառներ մէն մի իւր որոշ որոշ ներշնչութիւններ ունէր: Մուշ՝ Խորենացւոն կը ներշնչէր, Գողթան՝ Գողթնացի երգիչներուն, Վասպուրականի Ռշտուննեան գաւառ՝ Ս. Գրիգոր Նարեկացւոն, որ իւր աղօթարանէն աչեր զէպ Վանակ ժողով կը գարձնելով երգեց.

«Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանալը

«Առաւոտեան երկուս փալակնածե արեգական նման»:

«Արդ Պ. Բահապետեան իւր քննական տեսութեամբ կրկտելով նախնեաց տաղաչափութեան գանձարանը, դուրս՝ կը բերէ ինչ որ հնութեան

արագ և կնիք ունի և ալս իսկ է անհամաչափ արւեստ տաղաչափութեան։ Աբաց թող աճնպէս չը համարեն համաշափ և լանզաւոր ոտանաւորին սիրահարներ թէ մեք խապառ շանձան և անհարադատ կը համարիմք ամեն համաշափ երգեր ու տաղեր, զոր քնարերգակն աւելի կը սիրէ և որով մեծ հեղինակ Ներսէս Շնորհալին է, Բաց նա ևս իւր անհամաչափ երգած շարականաց մէջ աւելի վսեմ ու գերազանց է քան բովանդակ համաշափիներուն մէջ։ Ավչափս միան գնահատելով։ Աւետիս Բահադրեանի ուսումնասիրած աշխատութիւնը, ավ ևս կը թողամ Մեծարգու լանձնաժողովով ընտրութեան։ Միանգաման չեմ սինդեր թէ Պ. Բահադրեան իւր քննական տեսութեան մէջ բովանդակ լաղթանակ տարած է, զի զեռ շատ անշշափելի զանձեր ունիմք մեր գրական զանձարանին մէջ թագուցեալ, զեռ պէտք են Բազրատունուոյն և Բահադրեանի նման ուսումնասիրող անձինք, որ զան ի լրս հանեն, որով բարձրանալ և բարդաւածի հակական գրականութեան փառք։

Համայն գրավաստակ մշակաց Աղօթարար
ԽՐԻՄԵԱՆ»

1889 լունիս 16, յիւսկիստար

Նիւթեր Աղքային Պարմութեան համար գործը լանձնեցաւ Գեր. Տ. Գարեգին Սպիսկոպոս Սրուանձտեանցի միան, որովհետեւ գործն ինքնին գնահատելի էր, ինչպէս կը վկաէ և քննիչ Սրբազնն աւսու գրութեամբ։

«Ազնւաշուք Գաբրիէլ էֆէնդի Նորատունկեան, Ալանձնապետ գործադիր-մնակուն Յանձնաժողովով Յ. Խզմիրեանց կտակին։

Է Կ. Պօլի».

Ավսեմափապ Տէր.

Նիւթեր Աղքային Պարմութեան համար՝ աշխատասիրութեամբ Գալուստ Շիրմազնեանի» ընթերցակ ուշի ուշով և ախորժանօք։

«Արդինաւոր երկասիրողին համբաւը մեծ գրաւական մի է արդէն ալդ գրական թանկագին գործոն։ Բայց է ան գրագէտ և գրասէր հաճ, որ լսած չը լինի Գ. Շիրմազնեանի անունը, հանդիպած չը լինի Նորա զանազան ճաշակով և պիտանի նիւթերով գրած բանաստեղծական, պատմական, նկարագրական, թարգմանական, քննարատական և ավ բազմապիսի երկասիրութեանց զորս ի լրս հանած է Ռուսահալոց պարբերական հանդէսներու և լրագիրներու միջոցաւ Նա քաջածանօթ է նաև Տաճկահալոց Արշալուս Արարատեան և Մասիս Մազրոց վերծանողաց և ալն».

«Կէս զարէն աւելի է որ սկսած է նա գրիչ գործածել. և ակնօր իւր

պատկառելի և լիացեալ աւուրց մէջ կ'ընծայէ Ազգին մի գործ, որ նշանաւոր է ամենալն հանգամանօք:

«Իւր այս գործոն հիմն դրած է 1832 ամին, և ի գլուխ հանած 1863-րդ ամին. իսկ 1865 տարի 28—29-ին, երբ Թիֆլիսի մէջ տեղական քաղաքական փոթորկիկ մը ծագեցաւ, ալդ արկածին զո՞ւ գնաց Գ. Շիրմաղանեանի ամրող գրասունն: Աւազ անքան անգին կորստեան:

«Գ. Շիրմաղանեանի գրասունը ոչնչանալուն հետ՝ անհետ եղած է իւր այս պատրաստած գործը, զոր դառնութեամբ սրտի ստէպ կը վշատակէ, ո՞ր կը պարունակէր վաթունէն աւելի հայ անուանց կենսագրութիւնը բազմակողմանի և ճոխ նկարագրւած: Յետ ախորիկ վերսուին ի Պարսկաստան գնալով, ի նորու կը ձեռնարկէ գրել իւր սիրելի նիւթերը, զոր բաժանած է երկուն և ութ գլխու, բաց անձինք՝ որոց կենսագրութիւնը կ'ընէ երեսուն և ութէն՝ շատ աւելի են, լորս կը փայլին իրեւ գոհարք փողփողուազնութեամբ, առաքինութեամբ՝ և խաստութեամբ, տիկնալք և դստերք Հալոց՝ Ոսկում խանունն, Սանամ խաթուն, Համատանցի հալուին, և Նազ լուջան՝ մականուանեալն «տիլ Փրուչ» (բերկրանք սրտի) գեղանին ու խելանին, և ալն և ալն:

«Ազգակին պատմութեան նիւթերը» կը սկսի 1779 թւականի դէպքերէն, նկարադրելով կենսագրութիւն նշանաւոր Հալոց ի Պարսկաստան, և կը հասնի կը դադարի մինչև ալն հուսկապ անձնաւորութիւններն որ կ'ապրին մեր օրով և փառաւոր ասպարէջներ գրաւած են քաղաքականութեան մէջ, որպէս է Մէլքում խան, Զհանկիր և Նարիման խաներ, և ալն, և կենսագրեալ անձնաւորութեանց շատերը գերի վարելով, լորոց ու մանց քրիստոնէութիւնն ուրանալ տած են և ոմանք ներքինացուցած, ու անպէս լառաջ մատուցած են մնամեծ ասպարէջները. բաց շատ ևս են որ իրենց աղքութիւնը և հաւատքը պահպանելով հանդերձ բարձրագուն աստիճանի և պաշտօնի հասած են ձեռնոտու և օգտակար հանդիսանալով իրենց աղդակցաց և եկեղեցւոյն, Անոնցմէ ոմանք ականաւոր նախարարներ են, ոմանք պալատական խորհրդական, գանձուց տեսուչ, գնդապետ, դօրապետ, բարեկարգիչ, կուսակալ, ոմանք արհեստով և ճարտարութեամբ փակեալ, Արեաց աշխարհի և իրանի Շահին փառքն են եղած պետութեան սիւն և սուր, մինուն ժամանակ և հայ անուան պատիւ:

«Ներքինի Աղա Մահամմատ խանն՝ որ Կածարաց ցեղի պետութեան հիմնադիրն է, և նոյն ցեղի սերունդն է արդի Վեհ. Շահն Նասրէտտին, զինու զօրութեամբ հնալանդեցուց պարախց գաւառներն և զաւառապետներն, ուստի և լառաջ եկաւ ամեր, տար, գերութիւն և արիւնհեղութիւն. նոյն աղէտից մատնեցան և հալաբնակ գաւառները. Վրաստանի մալրաքաղաք Թիֆլիսն՝ որ հակերով լի ծաղկեալ քաղաք մի էր, 1795-ին աւերեցաւ և անթիւ գերիներ տւաւ: Ղարատաղ, Ղարաբաղ, Գանձակ, Շամքօր, Նախջևան, Երևան իրենց գիւղերով քանդեցան և գերի վարեցան,

Նորապէս և Ֆաթ-Ալի Շահին և գահաժառանդ Աքբաս Միրզափի օրով թէ-
օսմ. Պետութեան և թէ ոռուսաց հետ եղած պարսկական պատերազմի մի-
ջոցին՝ իրենց բաղմաթիւ և ընդարձակ աւաններով, գիւղերով և քաղաք-
ներով, որոց կարգին և Ս. Էջմիածին և այլ վաճորակք, Բագրեանդ գա-
ւառը՝ Ս. Յովհաննէս կամ Խոչ Գիլխէի վանք, Վասպուրականի և Տարօ-
նու կողմանքը մնձամնծ անցքեր կրեցին. Պարսկահաջոց գաղթականու-
թիւն և պատճէնք զանազան կոնդակաց կաթողիկոսաց և կարեսոր թղթոց
և ավն, և ավն.

«Սոքա ամենն Ազգալին պատմութեան զուտ նիսթեր կը պարունակեն-
և նորա լրացուցիչ մասը կը կազմնեն. Արդարեւ եղեր են բանասէրք ոմանք,
որ դրած են ան վիշտակեալ նիսթերի վրաէ, բայց Գ. Շիրմաղանեանինը
լարնի առաւելութիւն ունի, աւելի մանրամասն, աւելի հիմնաւոր, ուստի
և աւելի կատարեալ և ճշմարիտ».

«Իւր գրածներուն մեծ մասին ականատես է Գ. Շիրմաղանեանն և
կենսագրած անձանց ոմանց հետ բերան առ բերան խօսած է, արդ ան-
ձանց ժամանակակից և գործակից ծերունիներէ լսած է, ալլոցմէ ևս հար-
ցուցած և քննած. Մ. Թաղիալեանցի «Պատմութիւն Պարսից» գրքէն և Կալ-
կաթափի «Աղջամար» լրագրէն, Խաչիկեան Տ. Յօհ. աւագ քահանալի «Գա-
ւազանադրքէն» և պարսկերէն «Ականաբների պատմութիւն» անունով գրքէն,
Նոր Զուղափի Ամենափրկիչ Ս. Վանուց մատենադարանը զանւած կոնդակ-
ներէ, և այլ և այլ թղթակցութիւններէ ու հրովարտակներէ, Ռուսաց օրա-
գրերէ և պաշտօնական գրութիւններէ քաղած է, որ դրւած եղեր են
Պարսից պատերազմներու և այլ դէպքերու առթիւ:

«Նիսթեր Ազգակին Պատմութեան ակնպիսի մասեր ևս ունի հետաքր-
քրութեամբ լի, որ ի հանդէս կածէ պարսիկ արքունեաց և պալատան ներ-
քին և արտաքին արարողութեանց և կենցաղավարութեանց նկարագիրը,
դաւառաց և ցեղերու վրաէ անպիսի տեղեկութիւններ կ'ընծալէ, որ բազ-
մաց անձանօթ են, Դենի, ընտանեկանութեան, ծիսից, սովորութեանց,
տնտեսութեան, վաճառականութեան, ռազմի և կառավարութեան իսկա-
տիպ պատկերներ կը գծէ, և ժամանակակից մնձամնծ դէպքերը կը պարզէ,
որք Աղջամարին Պատմութեան հետ նաև Պարսից կամ քաղաքական պատ-
մութեան առատ և ընտիր նիսթեր են».

«Եթէ հարկ լինէր սուն գործոն գնահատումն ցոյց տալու համար ի մէջ
բերել քանի մը հատւածները, կարելի չէր հատւածնել, կարելի չէր ընտ-
րել, զի բովանդակապէս ընտիր է թէ նիսթով և թէ ոճով, միան ուրեք
ուրեք գրչի կորովը թուղացած ինկած է և արդ՝ ծերութեան արգասիքն է-
լիսկ ընդհանրապէս աննման լաջողակութեամբ գրւած է, պակծառ, կեն-
դանի, որ կը լուզէ, կը լացնէ, կը ծիծաղեցնէ, կը հիացնէ, կը կատ-
ղեցնէ, և կը դառնառ կը մեղմացնէ: Առաւել հմտալից են քննադատու-
թիւնները».

«Կը տեսնէի ահա թէ բազմաքիրտն աշխատութեանց և թանգագնի դրոժ մի է «Նիւթեր Աղքավին պատմութեան համար՝ աշխատասիրութեամբ Գալուստ Շիրմազանեանի»։ և ըստ իմ կարծեաց՝ բարեվիշտառակ Աղա Յ. Իգ-միրեանցի կտակած Սահակ-Մեսրովը մրցանակին խսկապէս արժանի։

«Ընդունեցէք, Վահմափալ տէ՛ր, իմ խորին լարգանացս հետ և սրտա-դին ողջոնս հանդերձ օրհնութեամբ, զոր կը նւիրեմ Պատ. Յանձնաժո-ղովով։»

ՍՐՈՒԱՆՁՏԱՆՑ ԴԱՐԵԳԻՆ ԵԳԻՍԿՈՊՈՍ»

1889 Մայիս 30 ի Բերա

Ամելացնենք մեր կողմից, որ պ. Գալուստ Շիրմազանեանի «Նիւթեր Աղքավին պատմութեան» աշխատութիւնը արժանացաւ Իզմիրեան մրցա-նակի։

Խմբ.